

Պարտադրելը կարևոր է



Հայկ Ոսկանյանի խոսքով՝ եթե Հունաստանն ունենար դիվերսիֆիկացված կենսաթոշակային համակարգ, ճգնաժամը նրան չէր հասցնի դեֆոլտի շեմին:

2011-ից Հայաստանում ներդրվելու է կենսաթոշակային կամավոր կուտակային համակարգը, իսկ 2014-ից՝ պարտադիրը: Այս վերջինին անցնելը մինչև 40 տարեկանների համար լինելու է պարտադիր: Կենսաթոշակային բարեփոխումների կառավարման խորհրդի անդամ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կենսաթոշակային համակարգի սպասարկման բաժնի պետ Հայկ Ոսկանյանը «Կապիտալի» հետ զրույցում պնդում է, որ Հայաստանի դեմոգրաֆիկ իրավիճակի պայմաններում կենսաթոշակային կուտակային համակարգն այլընտրանք չունի:

-Պարոն Ոսկանյան, կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը ՀՀ-ում այլընտրանք ունի:

-Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից ամենակարևորը դեմոգրաֆիական վիճակն է: Մեր հասարակությունը ծերացող է, այս առումով գրեթե չենք տարբերվում եվրոպական ժողովուրդներից: Բոլորս էլ լսել ենք ֆինանսական բուրգերի մասին, երբ միջոցներ են ներգրավվում նոր հաճախորդներից և այդ միջոցները որպես եկամուտ տրվում են հին հաճախորդներին: Գործող բաշխողական կենսաթոշակային համակարգը, ըստ էության, իրենից ֆինանսական բուրգ է ներկայացնում (Ponzi scheme, երբ նոր հաճախորդների գումարները վճարում են հին հաճախորդներին որպես եկամուտ, հիշենք Մեդոֆին), երբ գումար ենք վերցնում այսօրվա աշխատողներից և տալիս նախկին աշխատողներին՝ որպես թոշակ: Այս համեմատությունը շատ հետաքրքրական է, քանի որ միանգամից կարելի է պատկերացում կազմել այդ համակարգի ֆինանսական կայունության մասին: Եթե նմանատիպ ֆինանսավորում ունեցող որևէ նախաձեռնության մենք հանդիպեինք ֆինանսական հատվածում, ապա կաշխատեինք հեռու մնալ դրանից, քանի որ այն պահից սկսած, երբ նոր վճարում կատարողների քանակը նվազի, մենք կկորցնեինք մեր գումարները, այդ իսկ պատճառով նման նախաձեռնությունները մասնավորի կողմից իրականացնելը ապօրինի է: Կուտակային համակարգի ներդրման ընդդիմադիրներն ասում են՝ հարկային վարչարարությունը լավացրեք,

հարկահավաքումը նորմալ թող լինի, կկարողանանք բարձր կենսաթոշակներ տալ: Բհարկե, մենք ունենք ոչ ֆորմալ տնտեսություն, խնդիրներ հարկային վարչարարության հետ: Բայց եթե նույնիսկ ստվերային տնտեսություն չլինի, միևնույնն է, 18-63 տարեկան բոլոր աշխատողների կատարած վճարումների հաշվին երկար ժամկետում հնարավոր չի լինի ապահովել արժանավայել կենսաթոշակների չափ: Եվ այս իրավիճակը դեռ երկար ժամանակ պահպանվելու է: Իսկ բաշխողական համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է մեկ թոշակատուին գոնե երեք աշխատող հարաբերակցություն: Այսինքն՝ այսօր պետությունը չի ապահովում համակարգի ֆինանսական կայունությունը՝ միայն բյուջեից կենսաթոշակներ տրամադրելով: Պետք է ընտրել կենսաթոշակների ֆինանսավորման այլ աղբյուրներ, այսինքն՝ դիվերսիֆիկացնել այդ աղբյուրները: Բհարկե, պետությունը մի կողմից շարունակելու է վճարել աշխատանքային կենսաթոշակ՝ միևնույն ժամանակ ապահովելով ֆինանսապես կայուն համակարգ, ինչպես նաև բարձր կենսաթոշակներ՝ աշխատելու տարիներին կուտակած միջոցների շնորհիվ: Այսինքն՝ երկարաժամկետ հատվածում խնդիրը լուծվում է կուտակային համակարգի ներդրման միջոցով:

-Ինչպիսի՞ն է այս առումով միջազգային փորձը, և ի՞նչ կարիք կա ներդնել նաև պարտադիր կուտակային համակարգ: Չէ՞ որ եթե համակարգը լավն է, բոլորը պետք է շահագրգռված լինեն կամավոր անցնելու դրան:

-Հաճախ ասում են՝ աշխարհի ոչ մի առաջատար երկրում նման համակարգ չկա: Բայց կուտակային համակարգը գործում է գրեթե բոլոր եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում, պարզապես որոշ երկրներում պետական մասնակցությունը (պարտադիր էլեմենտը) ավելի քիչ է, որոշ երկրներում՝ ավելի շատ: Նիդեռլանդներում ու Գերմանիայում, օրինակ, հարցը լուծվում է գործատուների մակարդակով: Երբ աշխատողը գնում է աշխատանքի, նա ընտրության հնարավորություն չունի, նա պետք է օգտվի գործատուի կողմից առաջարկվող կենսաթոշակային սխեմայից, քանի որ դա է տվյալ գործատուի սոցիալական փաթեթի առաջարկը: Գործատուն աշխատողի հետ պայմանավորվածության շրջանակում որոշակի գումար է փոխանցում կենսաթոշակային հիմնադրամներին, և կարիք չկա, որ պետությունը օրենսդրորեն դա պարտադրի: Բայց այսպիսի ինքնակազմակերպվածություն (որ հարցը լուծվի գործատուների մակարդակով) բոլոր երկրներում չէ, որ կա: Մերձբալթյան երկրներում, օրինակ, բավական լուրջ պարտադիր կուտակային համակարգ է գործում: Չիլիում ժամանակին ընդհանրապես վերացվեց հին համակարգը, և միանգամից պարտադրվեց կուտակայինը, թեև այսօր արդեն նրանք վերականգնել են պետական կենսաթոշակները, ինչի արդյունքում նրանց համակարգը այժմ բավական լավն է: ԱՄՆ-ը ավանդաբար լիբերալ տնտեսություն ունի, պետական կենսաթոշակների չափն այնքան ցածր է, որ

մարդիկ կամավոր գնում կուտակում են: Բայց այս ճանապարհը Հայաստանի պարագայում հնարավոր չէ, մենք չենք կարող անցնել այն էվոյուցիոն ճանապարհը, որ անցավ Եվրոպան կամ ԱՄՆ-ը՝ նման ինքնակազմակերպվածության հասնելու առումով: Բացի այդ՝ մարդիկ սովորաբար այսօրվա սպառումը գերադասում են վաղվա սպառումից: Ուստի պարտադրելը կարևոր է հատկապես այն պատճառով, որ միայն կամավոր կուտակային համակարգի պարագայում կարճաժամկետ ֆինանսական դժվարությունների ժամանակ մարդիկ կդադարեցնեն վճարումներ կատարելը կենսաթոշակային ֆոնդերին: Իսկ երբ պետությունը պարտադրում է, այս հարցը ստանում է իր լուծումը: Շատ կարևոր է, որ մարդիկ գիտակցեն՝ կենսաթոշակային բարեփոխումների հիմնական նպատակը սոցիալական խնդիր լուծելն է: Այսինքն՝ բոլոր հաշվարկների հիմքում ընդունվում է սոցիալական բաղադրիչը: Իհարկե, եթե սա կողմնակի դրական այլ էֆեկտներ էլ կարող է տալ, ապա սա էլ է հաշվարկվում: Նոր համակարգի ներդրումով խնայողությունների աճը բերելու է ներդրումների ու տնտեսական աճի, ինչպես նաև տոկոսադրույքների նվազման: Գործարարները սկսելու են ավելի թափանցիկ աշխատել՝ ֆինանսական շուկայից միջոցներ ներգրավելու համար, և սա, անշուշտ, էական դրական ազդեցություն է թողնելու ողջ տնտեսության վրա:

-Իսկ երբ տոկոսադրույքները նվազեն, ակտիվների կառավարիչների համար դժվարություններ չեն առաջանա ապահովելու իրական եկամտաբերություն, հատկապես եթե գնաճը բարձր լինի:

-Գոյություն ունի դիվերսիֆիկացիա ինչպես գործիքների, այնպես էլ աշխարհագրական առումով: Կան սահմանափակումներ կոնկրետ ֆինանսական գործիքների համար, որոնցում ներդրվելու են այդ ակտիվները, այսինքն՝ ամբողջ գումարը չի կարող ներդրվել մի քանի գործիքների մեջ: Օրինակ՝ առավելագույնը 5-10% կարող է ներդրվել մեկ թողարկողի գործիքի մեջ, որն էլ թույլ կտա ապահովել կենսաթոշակային ֆոնդում բազմաթիվ գործիքների առկայությունը: Եթե մի գործիքի եկամտաբերությունը շատ ցածր լինի, դա կարող է փոխհատուցվել մեկ այլ գործիքի բարձր եկամտաբերությամբ: Եվ եթե մի որոշակի կարճ ժամանակահատվածում մեր երկրում բարձր գնաճի արդյունքում իրական տոկոսադրույքը բացասական լինի, դա կփոխհատուցվի արտասահմանում ներդրված միջոցների համեմատաբար բարձր եկամուտների հաշվին: Իսկ ընդհանրապես՝ հնարավոր չէ, որ երկարաժամկետ կտրվածքում երկրում գնաճը տոկոսադրույքներից բարձր լինի, այսինքն՝ հնարավոր չէ, որ իրական տոկոսադրույքը զրոյական կամ բացասական լինի: Եթե նման բան լինի, ապա ողջ տնտեսությունը շատ ծանր վիճակում կհայտնվի, և այս պարագայում արդեն նշանակություն չի ունենա՝ կենսաթոշակային համակարգը

բաշխողակա՞ն է, թե՞ կուտակային: Ավելին՝ կուտակային կենսաթոշակային համակարգով երկրներն այս ֆինանսական ճգնաժամի ժամանակ ավելի բարենպաստ իրավիճակում հայտնվեցին, քան մյուսները: Հունաստանում, օրինակ, գործում են թոշակառուների բազմաթիվ արտոնյալ խմբեր, որոնք, 40-45 տարեկանից սկսած, ստանում են մեծ չափերի կենսաթոշակներ: Այսինքն՝ պետությունը, ժամանակին տուրք տալով քաղաքական կարճաժամկետ նպատակներին, այսօր չի կարողանում ապահովել համակարգի ֆինանսական կայունությունը: Բայց եթե Հունաստանն ունենար դիվերսիֆիկացված կենսաթոշակային համակարգ, երկարաժամկետ ծրագրեր, այս ֆինանսական ճգնաժամը նրա վրա ավելի քիչ ազդեցություն կունենար և չէր հասցնի դեֆոլտի շեմին, քանի որ պետական բյուջեից թոշակներ վճարելու գումարների ծավալն այդքան մեծ չէր լինի: Այժմ նրանք միջազգային կառույցների ճնշման ներքո ստիպված կրճատում են պետական ծախսերը, այդ թվում՝ կենսաթոշակները:

-Իսկ մտավախություն չունե՞ք, որ ակտիվների կառավարիչներ չեն հայտնվի, կամ կլինեն մի քանիսը: Կոռուպցիոն ռիսկեր չկա՞ն:

-Մի քանի ներդրումային ընկերություններ արդեն իսկ մտադրություն են հայտնել գործել նույնիսկ կամավոր համակարգի պայմաններում, այսինքն՝ մինչև 2014թ.: Ի դեպ, գրեթե բացառված են նաև կոռուպցիոն ռիսկերը: Ցանկացած մարդ կարող է ազատ ընտրել իր ակտիվների կառավարչին՝ վստահ լինելով, որ ո՛չ գործատուն, ո՛չ կառավարիչը այդ մասին չեն իմանա: Այսինքն՝ գործատուն չի կարող պարտադրել աշխատողին ընտրել այս կամ այն ակտիվի կառավարչին: Դեպոզիտարիայում անհատական հաշիվների ծրագիր է ներդրվելու, որը համապատասխանելու է տեղեկատվության անվտանգության, SS և գործառնական ռիսկի կառավարման միջազգային ստանդարտներին, և որի պարագայում մարդկային գործոնի ազդեցությունը հասցված է լինելու նվազագույնի: Բնակչության տեղեկացվածության ցածր մակարդակը, իհարկե, օբյեկտիվ գործոն է, սրա հետ պետք է հաշվի նստել: Այս առումով ասեմ, որ կա մի ուսումնական ծրագիր, որն ընդգրկելու է դպրոցներում, բուհերում նաև գործատուների մոտ ուսուցման իրականացում և որը մարդկանց ֆինանսական համակարգի վերաբերյալ համապատասխան գիտելիքներ է տալու: Ժամանակն է, որ բոլորը պատկերացնեն, թե ինչ է ֆինանսական համակարգը, ռիսկը, եկամտաբերությունը և այլն, որ հնարավորություն ունենան տեղեկացված լինելով որոշում կայացնել: Մասնակիցների կողմից ընտրության կատարումն է, որ համակարգում պետք է մրցակցություն ապահովի: Ինչ վերաբերում է անվստահությանը, ապա նշեմ, որ դա պայմանավորված է նաև հենց տեղեկացվածության պակասով: Մարդիկ, օրինակ, հաճախ այսպիսի դատողություններ են անում՝ «եթե կա ռիսկ, ուրեմն դա վատ է»: Նրանք չեն մտածում ռիսկը կառավարելու մասին: Մեր ուսուցողական ծրագրերի

իրականացումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը կմեծացնի նաև մարդկանց վստահության աստիճանը ֆինանսական ինստիտուտների նկատմամբ:

Զրուցեց Հրայր Մանուկյանը, «Կապիտալ», 01.07.2010 թ.